ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

30.05.2019
342-42

ՀՀ վարչապետի աշխատակազմի
ղեկավար պարոն Էդուարդ Աղաջանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աղաջանյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել Radio France International-ի ֆրանսիացի լրագրող Կոնստանս Լեոն և խնդրել իրեն աջակցել տեղեկություն ստանալու հարցում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել՝

1. ՀՀ Կառավարության և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենը,
2. Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման համար ՀՀ Կառավարության կողմից հայտարարված հանրային մրցույթի (տենդերի) առաջարկի փաթեթը,
3. Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման համար հայտարարված հանրային մրցույթի (տենդերի) հաղթող կազմակերպության մասին հրապարակային հայտարարությունը,
4. ՀՀ Կառավարության կամ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից իրականացված ջրային պաշարների վերաբերյալ բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատականը,
5. Վեոլիա ջուր ՓԲԸ-ի ջրերի կառավարման մասով ներքին աուդիտի պատճենը, եթե առկա է:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան